600.0048.22.02.17

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

22 փետրվարի 2017 թվականի №48Ա
քաղ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՄԻ ՇԱՐՔ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «ա» ենթակետը, 78-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերը և հաշվի առնելով 2015 թվականի փետրվարի 2-ից «ՍՈՖԹԼԻՆԿ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության լուծարման փաստը (համաձայն Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի էլեկտրոնային համակարգի տվյալների)՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի՝
   1) 2007 թվականի մարտի 23-ի «ՍՈՖԹԼԻՆԿ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցի լիցենզիա տրամադրելու մասին» №122Ա որոշումը,
   2) 2009 թվականի փետրվարի 25-ի «ՍՈՖԹԼԻՆԿ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը հանրային ամրակցված հեռախոսային ցանցի ոչ աշխարհագրական կոդի և համարների զբաղեցման թույլտվություն տրամադրելու մասին» №52Ա որոշումը,
   3) 2009 թվականի հոկտեմբերի 21-ի «ՍՈՖԹԼԻՆԿ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրված *№ՌՄ/Կ-079/1*

թույլտվությունն և *№0110* լիցենզիան վերաձևակերպելու մասին» №661Ա որոշումը,

4) *2010* թվականի փետրվարի *17*-ի «ՍՈՖԹԼԻՆԿ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության բաժնեմասը օտարելուն համաձայնություն տալու մասին» №44Ա որոշումը,

5) *2012* թվականի մայիսի *11*-ի «ՍՈՖԹԼԻՆԿ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրված №ՌՄ/Կ-079/1 թույլտվությունը և Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2009 թվականի հոկտեմբերի 21-ի №661Ա որոշման 1-ին կետն ուժը կորցրած ճանաչելու մասին» №165Ա որոշումը,

6) 2014 թվականի հուլիսի 9-ի «ՍՈՖԹԼԻՆԿ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը Հայաստանի Հանրապետության պետական բյուջե գումար փոխանցելը պարտավորեցնելու մասին» №263Ա որոշումը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և նրա գործողությունը տարածվում է 2015 թվականի փետրվարի 2-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Ռ. ՆԱԶԱՐՅԱՆ**

ք. Երևան
22 փետրվարի 2017թ.
ժամը 16^{00}